ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/77

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Խաչպար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Վ. Վահանյանի
«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցում, աշտահանիչ նյութերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Խաչպար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 28.10.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին

1. Ընդունելու որոշում՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին՝ հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասերով:

2. Նշված չափաբաժիններով նախատեսված ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նոր ընթացակարգ նախաձեռնելու և գնանշման նոր հարցում հայտարարելու դեպքում՝ ՀՀ պաշտպանության նախարարության տվյալ հրավերի գնանշման հանձնաժողովին արգելել ընդունելու հրավերը հաստատող որոշում, եթե հրավերի «տեխնիկական բնութագիր» Հավելված թիվ 1-ի «տեխնիկական հատկանիշներ»-ը սյունակներում ներառվելիք պահանջները կազմված կլինեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջների խախտումներով:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 28.10.2019թ.-ն և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, իսկ 01.11.2019թ.-ին և 14.11.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 14.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 21.11.2019թ.-ին:

2. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ-ն <<Ախտահանիչ նյութերի>> ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019 թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի հրավերի թվով 16 չափաբաժիններով պահանջվում են տարբեր տեսակի ախտահանիչ նյութեր (կից փաստաթուղթ թիվ 2):

Հրավերի թիվ 2-րդ և 10-րդ չափաբաժինների մասերով <<անվանումը>> սյունակներում գրված են միևնույն անվանումները՝ <<Դիքլորիզոցիանաթթվի

նատրիումական աղ պարունակող հաբեր>> (կից փաստաթուղթ թիվ 2, արված նշումները, և կից փաստաթուղթ թիվ 3, էջ՝ 1, արված նշումները), սակայն <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> Հավելված թիվ 1-ի << տեխնիկական հատկանիշներ>>-ը սյունակներում (կից փաստաթուղթ թիվ 3, էջ՝ 1, արված նշումները) թիվ 10-րդ չափաբաժնի մասով առկա է <<...անջատվող ակտիվ քլորի քանակը ոչ պակաս քան 1,75 գրամ....>> պահանջը, որը՝

ա) խտրական է, համապատասխանում է <<Ջոնսոն և Ջոնսոն>> ֆիրմայի արտադրության <<Պրեսեպտ>> բրենդային անվանումով հաբերի վերին սահմանին, որով սահմանափակում է ՀՀ տարածքում գործող բոլոր բուժկանխարգելիչ հիմնարկներում (անկախ նրանց կազմակերպաիրավական ձևից և գերատեսչական պատկանելիությունից) կիրառման համար անհրաժեշտ՝ ՀՀ ԱՆ 10.09.2015թ. թիվ 48-Ն հրամանով (կից փաստաթուղթ թիվ 4, էջեր՝ 1 և 2, արված նշումները) նախատեսված հայերեն մեթոդական հրահանգներ ունեցող այլ արտադրողների արտադրանքներով (կից փաստաթուղթ թիվ 5, էջեր՝ 1 - 4, արված նշումները) հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի մասնակցությունը թիվ 10-րդ չափաբաժնի մրցույթին, խախտելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջները:

բ) ամբողջական չէ, չի ներառում <<Ջոնսոն և Ջոնսոն>> ֆիրմայի արտադրության <<Պրեսեպտ>> բրենդային անվանումով հաբերի ստորին սահմանի տվյալները, դրանով իսկ հանգեցնելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը (կից փաստաթուղթ թիվ 6, էջեր՝ 1-4, արված նշումները), ինչպես նաև հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ <<նաև Խաչպար>> ՍՊԸ-ի, համար հավասար պայմաններ չի ապահովում, խախտելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջները:

Հրավերի թիվ 11-րդ չափաբաժնի մասով <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> Հավելված թիվ 1-ի <<տեխնիկական հատկանիշներ>>-ը սյունակի 3-րդ պարբերությունում առկա <<.... Պետք է երաշխավորված լինի Storz, Olympus, Fujinon, Pentax բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից ըստ դրանց մեթոդական ցուցումների՝ ախտահանիչ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար: ....>> (կից փաստաթուղթ թիվ 3, էջ՝ 1, արված նշումները) պահանջը խտրական է, չի համապատասխանում ախտահանիչ միջոցների ՀՀ ԱՆ 10.09.2015թ. թիվ 48-Ն հրամանի սահմանումներին (կից փաստաթուղթ թիվ 4, էջեր՝ 1 և 2, արված նշումները), սահմանափակում է հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի մասնակցությունը թիվ 11-րդ չափաբաժնի մրցույթին, հանգեցնում է գնումների

գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, ինչպես նաև հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ <<նաև Խաչպար>> ՍՊԸ-ի, համար հավասար պայմաններ չի ապահովում, խախտելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջները:

Հրավերի թիվ 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասերով <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> Հավելված թիվ 1-ի <<տեխնիկական հատկանիշներ>>-ը սյունակներում առկա <<.... Պետք է երաշխավորված լինի հոսպիտալում առկա Endocleans սարքավորման արտադրողի կողմից՝ ախտահանիչ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար: ....>> պահանջը խտրական է, չի համապատասխանում ախտահանիչ միջոցների ՀՀ ԱՆ 10.09.2015թ. թիվ 48-Ն հրամանի սահմանումներին (կից փաստաթուղթ թիվ 4, էջեր՝ 1 և 2, արված նշումները), սահմանափակում է հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի մասնակցությունը թիվ 11-րդ չափաբաժնի մրցույթին, հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, ինչպես նաև հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ <<նաև Խաչպար>> ՍՊԸ-ի, համար հավասար պայմաններ չի ապահովում, խախտելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջները:

Հրավերի թիվ 15-րդ չափաբաժնի մասով <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> Հավելված թիվ 1-ի <<տեխնիկական հատկանիշներ>>-ը սյունակի 2-րդ պարբերությունում առկա <<.... պարունակում է պրոպանոլ-1 և պրոպանոլ-2 տեսակների սպիրտ՝ 75%-ից ոչ պակաս, ...>> պահանջը խտրական է, համապատասխանում է <<Ջոնսոն և Ջոնսոն>> ֆիրմայի արտադրության նախկինում <<Դոդեսեպտ 1000 մլ>>, իսկ այժմ <<Օկտենիդերմ 1000 մլ>> բրենդային անվանումով ախտահանիչ միջոցին, որոնց մշտապես առաջարկել և մշտապես հաղթող է ճանաչվել միևնույն՝ <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ն (կից փաստաթուղթ թիվ 7, էջեր՝ 1-3, արված նշումները): Այդ պահանջը սահմանափակում է ՀՀ տարածքում գործող բոլոր բուժկանխարգելիչ հիմնարկներում (անկախ նրանց կազմակերպահրավական ձևից և գերատեսչական պատկանելիությունից) կիրառման համար անհրաժեշտ՝ ՀՀ ԱՆ 10.09.2015թ. թիվ 48-Ն հրամանով (կից փաստաթուղթ թիվ 4, էջեր՝ 1 և 2, արված նշումները) նախատեսված հայերեն մեթոդական հրահանգներ ունեցող այլ արտադրողների արտադրանքներով (կից փաստաթուղթ թիվ 8, էջեր՝ 1 - 3, արված նշումները) հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի մասնակցությունը թիվ 15-րդ չափաբաժնի մրցույթին, խախտելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ

մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջները:

ՀՀ ՊՆ-ի կողմից <<Ախտահանիչ նյութերի>> ձեռքբերման նպատակով <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից 2019 թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1 որոշմամբ հաստատված Հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> Հավելված թիվ 1-ի <<Տեխնիկական հատկանիշներ>>-ը սյունակներում պահանջվող ախտահանիչ միջոցների համար առկա են այնպիսի պահանջներ, որոնք սահմանափակում են մրցակցությունը, հանգեցնում են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, անհիմն կերպով բարդացնում են այն ընկերությունների հնարավոր մասնակցությունը, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի, որոնք կարող են այդ չափաբաժինների մասով առաջարկել ՀՀ ԱՆ 10.09.2015թ. թիվ 48-Ն հրամանով նախատեսված հայերեն մեթոդական հրահանգներ ունեցող այլ արտադրողների ախտահանիչ միջոցներ: Վերոնշյալ պահանջները խախտում են ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ ու 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջները:»:

Ի լրումն 28.10.2019թ.-ի ներկայացվարծ բողոքի, «Խաչպար» ՍՊԸ-ն 07.11.2019թ.-ի գրությամբ հայտնել է հետրյալը.

«Հրավերի 2-րդ և 10-րդ չափաբաժինների մասով.

1. Պատվիրատուն հղում է կատարում ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին և ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշման 22-րդ կետին, որոնք բոլորովին կապ չունեն մեր բողոքի հետ, քանի որ բողոքում մեր կողմից ներկայացված փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները վերաբերվում են Պատվիրատուի կողմից ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ ու 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջների խախտումներով կազմված տեխնիկական բնութագրերին վերաբերվող պահանջներին, որոնք առկա են Հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասերով: Օրենքի միայն մեկ կետի պահպանումը չի կարող հիմք կամ արդարացում հանդիսանալ, և իրավունք չի վերապահում Օրենքի բազմաթիվ այլ կետերի պահանջները խախտելու կամ չկատարելու համար:

Ի լրումն բողոքի հայտնում եմ Ձեզ, որ հաբերի տեսքով դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանիչ միջոցները կիրառվում են ոչ թե հաբերի ձևով, այլ նրանց՝ ջրի մեջ լուծելուց հետո ստացվող, աշխատանքային լուծույթի տեսքով, որի

մասին պահանջը անխտիր բացակայում է Պատվիրատուի 2015թ. միչև օրս հայտարարված բոլոր հրավերների տեխնիկական բնութագրերին վերաբերվող պահանջներում: 1 հաբը 10 լիտր ջրում լուծելիս ստացվող աշխատանքային լուծույթի կոնցենտրացիան այն միակ չափանիշն է, որն ընդհանրական և համադրելի է հաբերի տեսքով արտադրվող անխտիր բոլոր արտադրողների հաբերի համար, քանի որ տարբեր արտադրողների՝ տարբեր անվանումներ ունեցող հաբերը իրարից տարբերվում են ինչպես իրենց կշիռներով և պարունակվող ազդող նյութի քանակներով, այնպես էլ 1 հաբում առկա ակտիվ քլորի կշռային և տոկոսային մեծություններով, սակայն բոլոր հաբերի մոտ էլ՝ համաձայն ՀՀ ԱՆ 10.09.2015թ. թիվ 48-Ն հրամանով հաստատված հրահանգներում առկա տվյալների (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 1, էջեր՝ 1 - 10, արված նշումները), համադրելի է միայն մեկ թվային մեծություն, թե 1 հաբը 10 լիտր ջրում լուծելիս ինչ կոնցենտրացիայի աշխատանքային լուծույթ է ստացվում (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 2, արված նշումները): Այդ միակ համադրելի չափորոշիչը մշտապես բացակայում է ՀՀ ՊՆ-ի կողմից 2015թ. մինչ օրս՝ դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղ պարունակող հաբերի տեսքով ախտահանիչ միջոցների ձեռքբերման համար հայտարարված՝ արդեն թվով 8, հրավերների տեխնիկական բնութագրերում առկա բազմաթիվ պահանջների ցանկից (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 1 - 3, արված նշումները): Այդ հրավերները մի քանի անգամ բողոքարկվել են <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից, կայացվել են ԳԲԽ-ԱՄ-2017/05 և ԳԲԽ-ԷՍ-2018/124 որոշումները, որոնցով բավարարվել են այդ բողոքները, սակայն ՀՀ ՊՆ-ն հրավերների տեխնիկական բնութագրերում շարունակում է չընդգրկել 1 հաբից ստացվող աշխատանքային լուծույթի կոնցենտրացիայի պահանջը, դրա փոխարեն այնտեղ ընդգրկելով հնարավոր մասնակիցների մասնակցությունը սահմանափակող, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները խախտող պահանջներ:

2. Պատվիրատուի կողմից գրված <<Պատվիրատուն նշված ախտահանիչ նյութը նկարագրելիս հիմք է ընդունել 2018թ-ին ձեռք բերված և Բանակում կիրառվող «Գեստ Մեդիքալ Լիմիթեդ Հինդ Ֆարմա» ֆիրմայի արտադրության «Հազ-Տաբ» ախտահանիչ նյութը, որի անջատվող ակտիվ քլորի պարունակությունը 1.75-ից պակաս չէ: Ակտիվ քլորի նույն քանակի պարունակություն ունի նաև «Ջոնսոն և Ջոնսոն» ֆիրմայի արտադրության «Պրեսեպտ» նյութը, որը Բանակը կիրառել է նախորդ տարիներին….>> արտահայտության մեջ ակտիվ քլորի պարունակության 1.75-ի համար հղում կատարելը <<Ջոնսոն և Ջոնսոն>> ֆիրմայի <<Պրեսեպտ>> անվանումով հաբին չի համապատասխանում իրականությանը, քանի որ համաձայն ՀՀ ԱՆ կողմից հաստատված հրահանգի, արտադրողի կողմից <<Պրեսեպտ>> անվանումով հաբերից 5.0 գ քաշով 1 հաբի լուծման ժամանակ անջատվող

ակտիվ քլորի պարունակությունը կազմում է 1.44 – 1.76 գ (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 4, արված նշումները), որտեղ անջատվող ակտիվ քլորի չափերի համար արտադրողի կողմից սահմանված են ստորին և վերին շեմեր:

Անջատվող ակտիվ քլորի ստորին և վերին շեմերի մասին նշումները մշտապես բացակայում են հաբերի տեսքով ախտահանիչ միջոցների ձեռքբերման համար ՀՀ ՊՆ-ի կողմից հայտարարված բոլոր հրավերների տեխնիկական բնութագրերում (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 1 - 3, արված նշումները), ինչը նշանակում է, որ այդ բոլոր հրավերները, այդ թվում՝ նաև ՀՀ ՊՆ-ի <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2019թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ <<Ախտահանիչ նյութերի>> ձեռքբերման նպատակով հայտարարված <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերը՝ թիվ 10-րդ չափաբաժնի մասով, չի ներառում գնման առարկայի ամբողջական նկարագրությունը՝ խախտելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ սահմանված պահանջը:

Գնման առարկայի ամբողջական նկարագրությունը չներառելով գնման առարկայի բնութագրերի մեջ, Պատվիրատուն մրցակցության հավասար պայմաններ չի ապահովում հնարավոր մասնակիցների՝ այդ թվում նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար, հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը հնարավոր մասնակիցների՝ այդ թվում նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար՝ հակասելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին:

Գնման առարկայի ամբողջական նկարագրության բացակայությունը խտրական է, սահմանափակում է մրցակցությունը, անհիմն կերպով պարզեցնում է հնարավոր մասնակիցների՝ այդ թվում նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի, հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին՝ խախտելով գնումներին մասնակցելու <<Խաչպար>> ՍՊԸ-ի իրավունքը, դրանով իսկ հակասելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

Լրացուցիչ հայտնում եմ Ձեզ, որ Պատվիրատուի կողմից <<…. Ակտիվ քլորի նույն քանակի պարունակություն ունի նաև «Ջոնսոն և Ջոնսոն» ֆիրմայի արտադրության «Պրեսեպտ» նյութը, որը Բանակը կիրառել է նախորդ տարիներին….>> պարբերությունում նշված <<Պրեսեպտ>> հաբերի ձեռքբերման համար ՀՀ ՊՆ-ի կողմից 2015թ. հայտարարվել է <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10>> ծածկագրով մրցույթը, որի <<Տեխնիկական հատկանիշներ>> այունակում առկա է եղել <<…. 1 հաբի

լուծման ժամանակ անջատվում է 1,76գ ակտիվ քլոր:...>> պահանջը (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 4/1, արված նշումները), որի վրա հիմնվելով էլ մերժել են <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից՝ որպես համարժեք ապրանք, առաջարկված <<Դիմաքս քլոր>> հաբերի հայտը (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 4/2, արված նշումները): Այդ հիմնավորմամբ մերժման հետ համաձայն չլինելով <<Խաչպար>> ՍՊԸ-ն 2016թ. բողոքներ է ներկայացրել ՀՀ ԳԲԽ, իսկ <<Դիմաքս քլոր>> հաբեր արտադրող ՌԴ <<Ինտերսեն Պլյուս>> ընկերությունը դիմել է Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովին, որի 22.09.2017թ. թիվ 23-118 պատասխանում փաստված է հետևյալը՝

<<Իսկապես, համաձայն Միության մասին Պայմանագրի դրույթներին և Հայաստանի Հանրապետության 16 դեկտեմբեր 2016թ. "Գնումների մասին" (այսուհետ՝ Օրենք) Օրենքին՝ մատակարարները, որոնց փաստաթղթերը չեն համապատասխանում գնման մասին փաստաթղթերի պահանջներին, չեն թույլատրվում գնումներին մասնակցելուն (Գնումների կարգավորման կարգի մասին արձանագրության 16 կետի 2 ենթակետ (Միության մասին Պայմանագրի № 25 հավելված, այսուհետ՝ Արձանագրություն), Արձանագրության №1 հավելվածի 2 կետի 6 ենթակետ և 8 կետի 6 և 10 ենթակետեր, Օրենքի 6 հոդվածի մաս 3):

Դրա հետ մեկտեղ, կարծում ենք, որ տվյալ դեպքում պատվիրատուի, ինչպես նաև տվյալ գնման վերաբերյալ բողոքները քննող մարմինների կողմից հաշվի չի առնվել, որ գնումների մասին փաստաթղթերի նկատմամբ նույնպես կան մի շարք պահանջներ:

Այսպես, օրինակ, Միության մասին Պայմանագրի դրույթներով սահմանված է, որ՝

պետական (մունիցիպալ) ոլորտում գնումների կարգավորման նպատակներից մեկն է մրցակցության զարգացումը (Միության մասին Պայմանագրի 88 հոդ. մաս 1 պարբ.10)>>

<<Շարադրվածի հիման վրա կարելի է ենթադրել, որ Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության կողմից ախտահանող միջոցների գնման մասին փաստաթղթերում նշված մատակարարի .... գնման առարկայի նկարագրությանը վերաբերող պահանջները չեն համապատասխանում Միության մասին Պայմանագրի և Օրենքի դրույթներին հետևյալ հիմքերով:>>

<<....“Խաչպար” ՍՊԸ առաջարկը մերժվել էր որպես ախտահանող միջոցների գնման մասին փաստաթղթերին անհամապատասխանող (....1 հաբ ախտահանող միջոցի լուծման ժամանակ արտադրված ակտիվ քլորի ծավալը):

Տվյալ դեպքում պատվիրատուն ապրանքանիշի ցուցման միջոցով օգտվել է իր գնման առարկան նկարագրելու իրավունքից (“ՊՐԵՍԵՊՏ”): Այսպիսի մոտեցումը պետք է ապահովի անալոգների (էկվիվալենտների) մուտքի թույլտվությունը: Տվյալ դեպքում դա

պոտենցիալ մատակարարների գնման մասնակցության մուտքի թույլտվությունն է, որոնք առաջարկում են "ՊՐԵՍԵՊՏ" ախտահանող միջոցի տեխնիկական բնութագրերին համապատասխանող ապրանք՝ նշված "ՊՐԵՍԵՊՏ" ախտահանող միջոցի (հաբեր և հատիկներ) կիրառման հրահանգում....

....Դրա հետ մեկտեղ, պատվիրատուն սահմանափակել է այդ հնարավորությունները, գնման մասին փաստաթղթերում նշելով ախտահանող միջոցի տեխնիկական հատկությունները, որոնք չեն համապատասխանում Հրահանգին, ... 5,0 գ կշռով հաբը լուծելիս արտադրվող ակտիվ քլորի ծավալով (նշված է 1,76 գ ակտիվ քլոր 1,44-1,76 գրամի փոխարեն), ...:

Անհիմն է հանդիսանում ցուցումն այն մասին, որ ակտիվ քլորի բարձր պարունակությունը (1,76 գ) թույլ է տալիս իրականացնել ախտահանումը առավել վտանգավոր վարակների առաջացման դեպքում՝ սիբիրյան խոց, ժանտախտ, խոլերա, հաշվի առնելով այն, որ Հրահանգը չի պարունակում տեղեկատվություն ախտահանող միջոցի 1 հաբը լուծելիս ակտիվ քլորի արտադրման ծավալից կախված ախտահանող միջոցների նախասահմանման մասին:>> (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 4/3, էջեր՝ 1 – 4, արված նշումները):

3. Պատվիրատուի կողմից գրված՝ << Այսինքն՝ Պատվիրատուն նույն հրավերի թիվ 2 և թիվ 10 չափաբաժիններով պահանջել է տարբեր ախտահանիչ նյութեր՝ ախտահանման տարբեր միջոցառումների կազմակերպման նպատակով:>> արտահայտությունը ճիշտ չէ, խեղաթյուրում է իրականությունը, քանի որ ներկայացված (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 1, էջեր՝ 1 - 10) հաբերի տեսքով

Ախտահանիչ նյութերը, ինչպես նաև Պատվիրատուի կողմից նշված <<Հազ-Տաբ>> անվանումով ախտահանիչ նյութը ունեն միակ և միևնույն ազդող նյութը՝ դիքլորիզոցիանութաթթվի նատրիումական աղը, որը ջրում լուծելիս անջատում է միակ և միևնույն ակտիվ քլորը, բոլորն էլ ունեն միանման և միատեսակ մանրէասպան հատկություններ, բոլորն էլ կիրառվում են միևնույն ոլորտներում և միևնույն նպատակներով, բոլոր հաբերի 1 հատը 10 լիտր ջրում լուծելիս ստացվում է միևնույն՝ 0,014 – 0,015 տոկոսանոց կոնցենտրացիայով աշխատանքային լուծույթը: Այդ բոլոր ախտահանիչ նյութերը տարբերվում են միայն իրենց բրենդային անվանումներով, արտադրողներով և նրանց կողմից ստեղծված կոմպոզիցիաներով (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 2, արված նշումները): Այդ նյութերի կիրառման մեթոդական հրահանգները ծավալուն են, ուստի այս դիմումը չծանրաբեռնելու համար դրանք Ձեզ կներկայացնեմ էլեկտրոնային տարբերակներով:

ՀՀ ՊՆ-ի 2018թ. դեկտեմբերի 25-ի <<ԷԱՃԱՊՁԲ-9/34>> մրցույթը <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ի փոխարեն հաղթող է ճանաչվել <<Խաչպար>> ՍՊԸ-ն, որի արդյունքում ՀՀ ՊՆ-ն ունեցել է 28056000 /քսանութ միլիոն հիսունվեց հազար/ ՀՀ դրամի խնայողություն (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 5):

Լրացուցիչ հայտնում եմ Ձեզ, որ տարբեր արտադրողների կողմից դիքլորիզոցիանութաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանիչ նյութերը արտադրվում են ինչպես հաբերի, այնպես էլ գրանուլների տեսքով, որի պահանջը առկա է նաև ՀՀ ՊՆ-ի <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի թիվ 9-րդ չափաբաժնում: Նախորդ տարիներին ՀՀ ՊՆ-ի կողմից հայտարարված նմանատիպ հրավերները մի քանի անգամ բողոքարկվել են <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից, կայացվել են ԳԲԽ-ԱՄ-2017/05 և ԳԲԽ-ԷՍ-2018/124 որոշումները, որոնցով բավարարվել են այդ բողոքները, որից ՀՀ ՊՆ-ի գրանուլների հրավերների տեխնիկական բնութագրերում կատարվել են համապատասխան փոփոխություններ (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 6, էջեր՝ 1-2, արված նշումները): Այդ փոփոխություններից հետո 2019թ. հուլիսի 2-ին ՀՀ ՊՆ-ի կողմից հայտարարված <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3>> ծածկագրով մրցույթը <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ի փոխարեն հաղթող է ճանաչվել <<Ջեկտա>> ՍՊԸ-ն, որի արդյունքում ՀՀ ՊՆ-ն ունեցել է 1438000 /մեկ միլիոն չորս հարյուր երեսունութ հազար/ ՀՀ դրամի խնայողություն (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 7):

Բերված փաստերը վկայում են, որ <<Խաչպար>> ՍՊԸ-ն իր բողոքներով ոչ թե ցանկանում է <<....Պատվիրատուի պահանջարկը «համապատասխանեցնել» իր ապրանքատեսակին ....>>, ինչպես դա հասկանում է ՀՀ ՊՆ-ն, այլ ցանկանում է, որպեսզի ՀՀ ՊՆ-ի կազմած տեխնիկական բնութագրերը չհակասեն ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջներին, որի արդյունքում գնումների և գնումների գործընթացի իրականացումը հե՛նց ՀՀ ՊՆ-ի համար է դառնում <<.... տնտեսող, արդյունավետ և օգտավետ ....>>:

Հրատապության կարգով լրացուցիչ հայտնում եմ Ձեզ, որ երեկ՝ նոյեմբերի 6-ին, բացվել են <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերին մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և հրապարակվել են տվյալները, որից պարզ է դարձել, որ հրավերի թիվ 2-րդ (4 մասնակից) ամենացածր գինը առաջարկվել է <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից , որը դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղ պարունակող 1 հաբի համար առաջարկել է 6,2 դրամ գին (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 7/1):

Մեր կողմից բողոքարկվող թիվ 10-րդ չափաբաժնի մասով (2 մասնակից) ամենացածր գինը առաջարկել է <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ն, որը սակայն թիվ 2-րդ չափաբաժնի նույն ազդող նյութը՝ դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղը, պարունակող 1 հաբի համար առաջարկել է 66,5 դրամ գին, այն դեպքում, երբ թիվ 2-րդ չափաբաժնի մասով 1 հաբի համար առաջարկել է 9 դրամ գին (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 7/2, էջ 1, արված նշումները):

Հրավերի 11-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով.

1. Պատվիրատուն նորից հղում է կատարում ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին և ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշման 22-րդ կետին, նորից <<մոռանալով>>, որ Օրենքի միայն մեկ կետի պահպանումը չի կարող հիմք կամ արդարացում հանդիսանալ, և իրավունք չի վերապահում Օրենքի բազմաթիվ այլ կետերի պահանջները խախտելու կամ չկատարելու համար: Այս չափաբաժինների մասով առկա պահանջները հակասում են նաև ՀՀ ԱՆ 10.09.2015թ. թիվ 48-Ն հրամանի սահմանումներին (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 8, էջեր՝ 1 և 2), սահմանափակում է հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի մասնակցությունը Հրավերի թիվ 11-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով չափաբաժնի մրցույթին, հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, ինչպես նաև հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ <<նաև Խաչպար>> ՍՊԸ-ի, համար հավասար պայմաններ չի ապահովում:

Լրացուցիչ հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ-ի 2019թ. <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով մրցույթի հրավերի թիվ 11-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով պահանջվող ախտահանիչ միջոցները՝ որոնց մոտ բացակայում են բրենդային անվանումները (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 9), <<պատահականորեն>> համապատասխանում են ՀՀ ՊՆ-ի 2015թ. <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15– ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10>> ծածկագրով մրցույթի հրավերի թիվ 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժիններով պահանջվող ապրանքներին, որտեղ նաև նշված են այդ ապրանքների բրենդային անվանումները՝ <<կամ համարժեք>> նշումներով (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 10, էջեր՝ 1 և 2, արված նշումները), և որոնց մասով հաղթող է ճանաչվել <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ն, որի (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 11, արված նշումները):

Այդ նույն չափաբաժինների մասով պահանջվող ախտահանիչ միջոցները <<պատահականորեն>> նորից համապատասխանում են ՀՀ ՊՆ-ի 2019թ. << ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-9/4>> ծածկագրով մրցույթի հրավերի թիվ 3-րդ, 5-րդ և 4-րդ չափաբաժիններով պահանջվող ապրանքներին՝ որոնց մոտ նույնպես բացակայում են

բրենդային անվանումները (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 12, էջեր՝ 1 և 2, արված նշումները), և որոնց մասով նորից հաղթող է ճանաչվել միակ մասնակից <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ն, որի առաջարկած ապրանքները <<պատահականորեն>> ունեն նույն անվանումները (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 13, էջեր՝ 1-2, արված նշումները), ինչ-որ պահանջվում էր ՀՀ ՊՆ-ի կողմից 2015թ. <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15– ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10>> ծածկագրով մրցույթի հրավերի թիվ 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժիններով (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 14):

Նախորդ տարիներին այդ ախտահանիչ միջոցների հրավերները ևս մի քանի անգամ բողոքարկվել են <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից, կայացվել են ԳԲԽ-ԱՄ-2017/05, ԳԲԽ-ԷՍ-2018/124 և ԳԲՔԱ-ԱՄ-2019/01 որոշումները, որոնցով բավարարվել են այդ բողոքները, սակայն ՀՀ ՊՆ-ն չի փոխել իր գործելաոճը, հրավերների տեխնիկական բնութագրերում շարունակում է ընդգրկել հնարավոր մասնակիցների մասնակցությունը սահմանափակող, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները խախտող պահանջներ (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 15, էջեր՝ 1-6, արված նշումները), որոնց <<շնորհիվ>> հաղթող է դառնում միակ մասնակից <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ն:

Հրապարակության կարգով լրացուցիչ հայտնում եմ Ձեզ, որ երեկ՝ նոյեմբերի 6-ին, բացվել են <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերին մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և հրապարակվել են տվյալները, որից պարզ է դարձել, որ մեր կողմից բողոքարկվող թիվ 11-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ն, որը այդ չափաբաժինների մասով պահանջվող 1 լիտրի համար առաջարկել է՝ համապատասխանաբար, 1900, 7060և 1090 դրամ գներ (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 7/2, էջ 1, արված նշումները):

Հրավերի 15-րդ չափաբաժնի մասով.

2. Պատվիրատուն կրկին անգամ հղում է կատարում ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի պահանջներին՝ կոնկրետ չնշելով թե որ մեկին, կրկին անգամ <<մոռանալով>>, որ Օրենքի որևէ կետի պահպանումը չի կարող հիմք կամ արդարացում հանդիսանալ, և իրավունք չի վերապահում Օրենքի բազմաթիվ այլ կետերի պահանջները խախտելու կամ չկատարելու համար:

Պատվիրատուն այս չափաբաժնի մասով գրել է նաև պարզաբանումներ, որոնցից առաջինը՝ <<….նախ բնութագրում ներառված «պարունակում է պրոպանոլ-1 և պրոպանոլ-2 տեսակների սպիրտերի՝ 75%-ից ոչ պակաս» պահանջով ախտահանիչ նյութ «Ջոնսոն և Ջոնսոն» ֆիրման չունի….>> մեր բողոքի էությունը խեղաթյուրելուն և բողոքի քննության

վրա ազդելուն նպատակամղված կանխամտաշված, միտումնավոր սուտ է (պատրաստ եմ ցանկացած ատյանում պատասխան տալ իմ բառերի համար), քանի որ դեռևս 2015թ. ՀՀ ՊՆ-ի կոցմից հայտարարված <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10>> ծածկագրով մրցույթի թիվ 16-րդ չափաբաժնի <<Անվանում>> սյունակում պահանջվում է գնման առարկա հանդիսացող <<Դոդեսեպտ U 1000 մլ կամ համարժեք>> անվանումով ախտահանիչ միջոցը, իսկ <<Տեխնիկական հատկանիշներ>> սյունակում ներառված գնման առարկայի բնութագրերում առկա են հետևյալ պահանջները՝ << Թափանցիկ, անգույն հեղուկ:Պարունակում է 2-պրոպանոլ-45%, 1-պրոպանոլ 30%, օկտենիդին դիհիդրոքլորիդ 0,1%: Նախատեսված է վիրահատական միջամտություններից առաջ մաշկը ախտահանելու համար: Փաթեթավորված է 1000 մլ տարողությամբ պոլիէթիլենային շշերով:Ֆիրմայի նշան: Պայթունավտանգ պահել փակ 5աստ. C-ից +30աստ C ջերմաստիճանում:>> (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 16, արված նշումները): Այստեղ գրված 2-պրոպանոլի 45%-ը գումրելով 1-պրոպանոլի 30%-ի հետ ստանում ենք Պատվիրատուի պարզաբանման մեջ նշված <<.... պրոպանոլ-1 և պրոպանոլ-2 տեսակների սպիրտերի՝ 75%...>> գումարային թիվը:

<<Դոդեսեպտ>> բրենդային անվանումով ախտահանիչ միջոց արտադրվել է միայն <<Ջոնսոն և Ջոնսոն>> ֆիրմայի կողմից, իսկ այդ անվանումով ապրանքի թիվ 16-րդ չափաբաժնի մասով էլի հաղթող է ճանաչվել միևնույն՝ <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ն (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 17, արված նշումները):

2015թ. դեկտեմբերի 10-ի մրցույթի թիվ 16-րդ չափաբաժնի <<Դոդեսեպտ>> անվանումով ապրանքի տեխնիկական բնութագիրը առանց փոփոխության և ամբողջապես ՀՀ ՊՆ-ն ներառել է 2017թ. մարտի 6-ի <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9>> ծածկագրով մրցույթի թիվ 11-րդ չափաբաժնի <<Տեխնիկական հատկանիշներ>> սյունակում, որպես անվանում այս անգամ <<Դոդեսեպտ>>-ի փոխարեն գրել են նոր անվանում՝ <<Օկտնիդերմ 1000 մլ կամ համարժեք>> , իսկ <<Ապրանքի անվանում>> սյունակում անվանումը այս անգամ գրված է ընդհանրական՝ <<Ախտահանիչ նյութեր>> (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 18, արված նշումները):

Պատվիրատուն այս չափաբաժնի մասով գրված պարզաբանման 2-րդ հատվածում գրել է <<.... իսկ բողոքում նշված և բանակի կողմից ձեռքբերված «Օկտենիման» ախտահանիչը գերմանական Schulk & Mayr ֆիրմայի արտադրանք է, բացի դա՝ նշված բնութագրով առկա են առնվազն 3 ռուսական և եվրոպական արտադրողների ախտահանիչ նյութեր....>>, որտեղ նշված «Օկտենիման» անվանումը նույնպես սխալ է, քանի որ << գերմանական Schulk & Mayr ֆիրմայի արտադրանք>>-ը կրում է <<Օկտենիդերմ>> անվանումը, որը ապացուցվում է նրանով, որ մեր կողմից բողոքարկվող <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի թիվ 15-րդ չափաբաժնի մասով <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> Հավելված թիվ 1-ի <<Ապրանքների անվանումը>> և <<Տեխնիկական հատկանիշներ>> սյունակներում առկա գրառումներն ու պահանջները (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 19, արված նշումները) նույնությամբ՝ առանց փոփոխության, առկա են եղել ՀՀ ՊՆ-ի կողմից 2019թ. հուլիսի 2-ին հայտարարված <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/4>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի թիվ 3-րդ չափաբաժնի <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ>> Հավելված թիվ 1-ի << անվանումը և ապրանքային նշանը >> և <<տեխնիկական բնութագիրը>> սյունակներում (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 20, արված նշումները):

Այդ չափաբաժնի մասով մրցույթում հաղթող է ճանաչվել միևնույն՝ <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ն, որը առաջարկել է << գերմանական Schulk & Mayr ֆիրմայի արտադրանք>> հանդիսացող <<Օկտենիդերմ>>, ո՛չ թե «Օկտենիման», անվանումով ապրանքը, որի մասով <<տեխնիկական բնութագրերը>> սյունակում ՀՀ Պն-ի կողմից պահանջվող «պարունակում է պրոպանոլ-1 և պրոպանոլ-2 տեսակների սպիրտերի՝ 75%-ից ոչ պակաս» արտահայտությունը ներկայացված է <<... . պարունակում է պրոպանոլ-1 և պրոպանոլ-2 տեսակների սպիրտ՝ ընդհանուր 75%՝ ....>> ձևակերպումով, որից հետո տրվել է այդ <<.... ընդհանուր 75%՝ ....>>- ի բացվածքը՝ <<.... 2-պրոպանոլ-45%, 1-պրոպանոլ 30%....>> (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 21, արված նշումները): Այդ բացվածքի թվերը ապացուցում են, որ դրանք նույնն են, ինչ որ եղել են ՀՀ ՊՆ-ի տարբեր տարիների մրցույթներում պահանջված նմանատիպ ապրանքները, որոնք եղել են <<Դոդեսեպտ Ս 1000 մլ>>, <<Օկտենիդերմ 1000 մլ>>, <<Ախտահանիչ նյութեր>> և այլ անվանումներ ունեցող չափաբաժիններում, որտեղ մշտապես հազթող է ճանաչվել <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ն (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 22, էջեր՝ 1-3, արված նշումները):

Այդ մրցույթների հրավերները նունպես մի քանի անգամ բողոքարկվել են <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից, կայացվել են ԳԲԽ-ԱՄ-2017/05, ԳԲԽ-ԷՍ-2018/124 և ԳԲՔԱ-ԱՄ-2019/01 որոշումները, որոնցով բավարարվել են այդ բողոքները, սակայն ՀՀ ՊՆ-ն չի փոխել իր գործելաոճը, հրավերների տեխնիկական բնութագրերում շարունակում է ընդգրկել հնարավոր մասնակիցների մասնակցությունը սահմնափակող, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները խախտող պահանջներ (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 22, էջեր՝ 1-3, արված նշումները), որոնց <<շնորհիվ>> մշտապես հաղթող է դառնում <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ն:

Հրատապության կարգով լրացուցիչ հայտնում եմ Ձեզ, որ երեկ՝ նոյեմբերի 6-ին, բացվել են <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով գնանշման հարցման

Հրավերին մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և հրապարակվել են տվյալները, որից պարզ է դարձել, որ մեր կողմից բողոքարկվող թիվ 15-րդ չափաբաժինների մասով հայտ են ներկայացրել 2 մասնակից, ամենացածր գինը առաջարկել է <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ն՝ 1 լիտրի համար 7800 դրամ գին (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 7/2, էջ 2, արված նշումները):

Լրացուցիչ հայտնում եմ Ձեզ, որ 2016թ. մինչ օրս ՀՀ ՊՆ-ի կողմից տարբեր հրավերների կազմումը օրինախախտ ձևով լինելու ահազանգերով և բողոքներով բազմիցս դիմել եմ ՀՀ ԳԲԽ, ՀՀ Գլխավոր Դատախազություն, ՀՀ ՏՄՊՊՀ, որոնց հետևանքով կայացվել են ԳԲԽ-ԱՄ-2017/05, ԳԲԽ-ԷՍ-2018/124 և ԳԲՔԱ-ԱՄ-2019/01 իրավապարտադիր որոշումները, առկա են ՀՀ Գլխավոր Դատախազության դիրքորոշումը (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 23, արված նշումները) և ՀՀ ՏՄՊՊՀ նախագահ Արտակ Շաբոյանի գրությունը ՀՀ Պնախարար Վիգեն Սարգսյանին (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 24, էջեր՝ 1-2, արված նշումները), սակայն ինչպես դրանք, այնպես էլ Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովի եզրակացությունը ոչ մի ազդեցություն չեն գործել ՀՀ ՊՆ-ի վրա, որը տարիներ շարունակ համառորեն այնպիսի գործելաոճ է դրսևորում, որի արդյունքում ՀՀ ՊՆ-ի ախտահանիչ նյութերի (և ո՛չ միայն դրանց) մրցույթներում մշտապես հաղթող է դառնում <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ն:

ՀՀ ՊՆ-ի կողմից <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ի նկատմամբ երկար տարիներ շարունակվող նմանօրինակ <<հոգատարություն>> ցուցաբերելը ինձ համար անհասկանալի և անընդունելի է, սակայն կարծում եմ, որ նման վերաբերմունքի բացատրությունը կարելի ենթադրել 2017թ. նոյեմբերի 11-ի <<Հայկական ժամանակ>> օրաթերթում հրապարակված, մինչ օրս ոչ մեկի կողմից չժխտված ու չհերքված մի հոդվածում առկա լրագրողական տեղեկատվությունից ելնելով, որտեղ նշվում է <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ի և ՀՀ ՋՈՒ Գլխավոր Շտաբի նախկին պետ Յուրի Խաչատուրովի հնարավոր կապերի մասին (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 25, էջեր՝ 1-2, արված նշումները):

<<Խաչպար>> ՍՊԸ-ի 28.10.2019թ. բողոքին ի լրումն ներկայացված լրացուցիչ փաստերն ու փաստարկները, նախորդ տարիներին տարբեր իրավասու մարմինների կողմից մեր բողոքին առընչվող ապրանքների ձեռքբերման նպատակով ՀՀ ՊՆ-ի կողմից հայտարարված տարբեր մրցույթների վերաբերյալ ընդունված տարաբնույթ որոշումները, եզրակացություններն ու գրությունները ևս մեկ անգամ փաստում և հաստատում են, որ <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով մրցույթի Հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասերով <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> Հավելված թիվ 1-ի <<Տեխնիկական հատկանիշներ>>-ը սյունակներում պահանջվող

ախտահանիչ միջոցների համար առկա են այնպիսի պահանջներ, որոնք սահմանափակում են մրցակցությունը, հանգեցնում են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են այն ընկերությունների հնարավոր մասնակցությունը, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի, որոնք կարող են այդ չափաբաժինների մասով առաջարկել ՀՀ ԱՆ 10.09.2015թ. թիվ 48-Ն հրամանով նախատեսված հայերեն մեթոդական հրահանգներ ունեցող այլ արտադրողների ախտահանիչ միջոցներ:

Վերոնշյալ պահանջները խախտում են ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ ու 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջները:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին

1. Ընդունելու որոշում՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին՝ հրավերի թիվ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասերով:

2. Նշված չափաբաժիններով նախատեսված ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նոր ընթացակարգ նախաձեռնելու և գնանշման նոր հարցում հայտարարելու դեպքում՝ ՀՀ պաշտպանության նախարարության տվյալ հրավերի գնանշման հանձնաժողովին արգելել ընդունելու հրավերը հաստատող որոշում, եթե հրավերի «տեխնիկական բնութագիր» Հավելված թիվ 1-ի «տեխնիկական հատկանիշներ»-ը սյունակներում ներառվելիք պահանջները կազմված կլինեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջների խախտումներով:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 29.10.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանy (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 28.10.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 01.11.2019թ.-ին թիվ Մ-49162 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8 գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքի վերաբերյալ (ծածկագիր՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/77, 28.10.2019թ) տեղեկացնում ենք հետևյալը.

Հրավերի 2-րդ ր 10-րդ չափաբաժինների մասով.

1. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8 գնման ընթացակարգի գնման հրավերի թիվ 10-րդ չափաբաժնում նշված ապրանքատեսակի տեխնիկական բնութագրերը կազմելիս Պատվիրատուն ղեկավարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2 մասի 3)-րդ կետի պահանջներով՝ այն է «գնման առարկայի բնութագրերըպետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը» և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526 Ն որոշման 22-րդ կետի պահանջներով՝ այն է«գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ...»:

2. Պատվիրատուն նշված ախտահանիչ նյութը նկարագրելիս հիմք է ընդունել 2018թ-ին ձեռք բերված և Բանակում կիրառվող «Գեստ Մեդիքալ Լիմիթեդ Հինդ Ֆարմա» ֆիրմայի արտադրության «Հազ-Տաբ» ախտահանիչ նյութը, որի անջատվող ակտիվ քլորի պարունակությունը 1.75-ից պակաս չէ: Ակտիվ քլորի նույն քանակի պարունակություն ունի նաև «Ջոնսոն և Ջոնսոն» ֆիրմայի արտադրության «Պրեսեպտ» նյութը, որը Բանակը կիրառել է նախորդ տարիներին: Նշված փաստը հավաստում է, որ ԳՀԱՊՁԲ-20-9/8 գնման ընթացակարգի գնման հրավերի թիվ 10-րդ չափաբաժնի վերաբերյալ «Խաչպար» ՍՊ ընկերության կողմից բողոքում շարադրած նյութը իրականությանը չի համապատասխանում, քանի որ Պատվիրատուն այդ ապրանքը նկարագրելիս հստակ ղեկավարվել է գործող «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2 կետի 3)-րդ ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526 Ն որոշման 22-րդ կետի պահանջներով և նկարագրել է առնվազն երկու արտադրողի արտադրանք: Բացի դա, «Խաչպար» ՍՊ ընկերության բողոքում նշված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ կետը վերաբերում է «մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված չափանիշներին», հետևապես չի կարող առընչվել հրավերի 10-րդ չափաբաժնի տեխնիական բնութագրի վերոհիշյալ «անջատվող ակտիվ քլորի քանակը ոչ պակաս քան 1.75 գրամ» պահանջին: Չհիմնավորված է նաև

Պատվիրատուի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի պահանջների խախտման վերաբերյալ «Խաչպար» ՍՊ ընկերության պնդումը, քանի որ գնման առարկայի բնութագրերը նախ՝ ըստ 1-ին կետի պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, իսկ ինչպես նշեցինք այդ բնութագրերը բավարարում են առնվազն երկու հնարավոր մասնակիցների, երկրորդ՝ չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների՝ ակտիվ քլորի նշված շեմը հիմնավորված է և Պատվիրատուի համար անհրաժեշտ է առանձնահատուկ պայմաններում Բանակում ախտահանման միջոցառումներ կազմակերպելու համար և երրորդ՝ 4-րդ կետով նշված է «ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը», ինչը ներառված է հրավերի տեխնիկական բնութագրերում:

3. Հայտնում եմ, որ հրավերի 2-րդ չափաբաժնով Պատվիրատուն պահանջել է նաև ախտահանիչ նյութ, որի մոտ ակտիվ քլորի քանակն արդեն առնվազն 1.5 գ է և որը կիրառվելու է Բանակում այլ ախտահանման ռեժիմ պահանջվող միջոցառումների ժամանակ: Այսինքն՝ Պատվիրատուն նույն հրավերի թիվ 2 և թիվ 10 չափաբաժիններով պահանջել է տարբեր ախտահանիչ նյութեր՝ ախտահանման տարբեր միջոցառումների կազմակերպման նպատակով: Պետք է նշել այն փաստը, որ 2019թ-ին «Խաչպար» ՍՊԸ-ն հաղթող է ճանաչվել սույն հրավերի 2-րդ չափաբաժնում նշված ապրանքի այլ մրցույթում, որի արդյունքում կնքվել է N ԷԱՃԱՊՁԲ-9/34-1 մատակարարման պայմանագիր: Եվ ենթադրելի է, որ բողոքի արդյունքում «Խաչպար» ՍՊԸ-ն ցանկանում է թե 2 և թե 10 չափաբաժինների համար առաջարկել միևնույն ապրանքը, այսինքն Պատվիրատուի պահանջարկը «համապատասխանեցնել» իր ապրանքատեսակին:

Հրավերի 11-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով.

1. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8 գնման ընթացակարգի գնման հրավերի նշված չափաբաժիններով պահանջվել են ախտահանիչ նյութեր՝ Պատվիրատուի բժշկական հիմնարկներում առկա էնդոսկոպիկ սարքերի ախտահանումը կազմակերպելու նպատակով: Ախտահանիչ նյութի պատճառով թանկարժեք սարքերի խափանումը և վնասումը բացառելու նպատակով Պատվիրատուն պահանջել է մատակարարման փուլում ներկայացնել երաշխիքներ: Ախտահանիչ նյութերի երաշխավորման փաստը կարող է արձանագրված լինել այդ բժշկական սարքավորումների մեթոդական ցուցումներում, կամ հաստատված լինել այդ սարքավորումներ արտադրող ընկերությունների, կամ ախտահանիչ

նյութը արտադրող ընկերության կամ նրանց պաշտոնական ներկայացուցիչների կողմից տրված երաշխիքային նամակով: Այսինքն, նշված պահանջով կարող են ոչ միայն առաջարկվել տարբեր սարքեր արտադրողների տարբեր ախտահանիչներ, այլ նաև ընդհանրապես այդ սարքերի արտադրողների հետ չառնչվող այլ արտադրողների ախտահանիչ նյութեր՝ եթե դրանք երաշխավորված են այդ արտադրող կազմակերպությունների կողմից: Նշենք, որ այդ սարքերի արտադրողները մեկից ավելի են Storz, Olympus, Fujinon, Pentax և Endocleans, չհաշված այն փաստը, որ դրանց կողմից երաշխավորված արտադրողները ևս բազմաթիվ են: Օրինակ՝ Anios, Jhonson,: Հետևապես Պատվիրատուն իր պահանջը ձևավորել է «Գնումներիմասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2 մասի 3)-րդ կետի և ՀՀկառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջներին համապատասխան և այս դեպքում ևս «Խաչպարի» բողոքն անհիմն է:

Հրավերի 15-րդ չափաբաժնի մասով.

2. ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8 գնման ընթացակարգի հրավերի 15-րդ չափաբաժնի մասով ներկայացվող պահանջը ձևավորվել է Բանակում կիրառվող նման ախտահանիչի պահանջով, համապատասխանում է օրենքի պահանջներին և նման բնութագրով ախտահանիչներ ունեն մեկից ավելի արտադրողներ: Պարզաբանում՝ նախ բնութագրում ներառված «պարունակում է պրոպանոլ-1 և պրոպանոլ-2 տեսակների սպիրտերի՝ 75%-ից ոչ պակաս» պահանջով ախտահանիչ նյութ «Ջոնսոն և Ջոնսոն» ֆիրման չունի, իսկ բողոքում նշված և բանակի կողմից ձեռքբերված «Օկտենիման» ախտահանիչը գերմանական Schulk & Mayr ֆիրմայի արտադրանք է, բացի դա՝ նշված բնութագրով առկա են առնվազն 3 ռուսական և եվրոպական արտադրողների ախտահանիչ նյութեր: Հետևապես այս մասով ևս «Խաչպար» ՍՊԸ բողոքն անհիմն է:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/77 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար աշտահանիչ նյութերի ձեռքբերման նպատակով 24.10.2019թ. հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 06.11.2019թ.-ին:

Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

10-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանիչ հաբեր»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Բուժ.գործիքների ախտահանման համար նախատեսված, ադիպինաթթու պարունակող հակամանրէային (ներառյալ տուբերկուլյոզ և հատուկ վտանգավոր վարակներ), հակավիրուսային, հակասնկային ակտիվությամբ օժտված դեզինֆեկցող ախտահանիչ միջոցներ հաբերի տեսքով, հաբի քաշը մինչև 6գ, որի ազդող նյութը դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղն է, յուրաքանչյուր հաբը լուծվելիս անջատվող ակտիվ քլորի քանակը ոչ պակաս 1,75 գրամ, փաթեթավորումը 100 հաբից ոչ պակաս տուփերով, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%:»:*

11-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Գլյուտարալդեհիդ պարունակող սառը մանրեզերծման նյութ բժշկական գործիքների համար»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Նախատեսված է բժշկական գործիքների ախտահանման և սառը մանրէազերծման համար: Երկկոմպոնենտ համակարգ բաղկացած հեղուկ և փոշի բաղադրիչներից, կամ պատրաստի լուծույթ: Ազդող նոյութը գլյուտար ալդեհիդ 2.2-2.7%, պարունակում է նաև կոռոզիայի ինհիբիտոր: Մինչև 5 լ տարաներով՝ 20%-ը 1 լիտրանոց: Պետք է երաշխավորված լինի Storz, Olympus, Fujinon, Pentax բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից ըստ դրանց մեթոդական ցուցումների՝ ախտահանիչ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 70%:»:*

12-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Օրթոֆտալատ ալդեհիդ պարունակող ախտահանիչ նյութ ENDOCLEANS սարքի համար»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Նախատեսված է բուժգործիքների ախտահանման և բարձր մակարդակի ախտահանման համար: Օժտված հակամանրէային ակտիվությամբ գրամ դրական և գրամ բացասական մանրէների՝ ներառյալ տուբերկուլյոզի միկոբակտերիաները, վիրուսների և սնկերի նկատմամբ, որի ազդող նյութը օրթոֆտալատ ալդեհիդն է, պատրաստի լուծույթը պետք է ունենա հակակոռոզիոն բաղադրամասեր: Մինչև 5 լ տարաներով: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%: Պետք է երաշխավորված լինի*

հոսպիտալում առկա Endocleans սարքավորման արտադրողի կողմից՝ ախտահանիչ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար:»:

13-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Ֆերմենտների կոմպլեքս պարունակող ախտահանիչ նյութ ENDOCLEANS սարքավորման համար»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Սպեցիֆիկ հոտով հեղուկ կոնցետրատ, ակտիվ ազդող նյութերն են ֆերմենտների կոմպլեքսը՝ սուբտիլիզին բակտերիալ կամ այլ պրոտեազա, ամիլազա, լիպազա, ցելյուլազա, ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ, PH-ը 7.8-8.8: Պետք է երաշխավորված լինի հոսպիտալում առկա Endocleans սարքավորման արտադրողի կողմից՝ ախտահանիչ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%:»:*

Վերոնշյալ 11-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժիններով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին համապատասխանում են Anios, Jhonson արտադրողները:

15-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Վիրահատական դաշտի (մաշկի) ախտահանման հեղուկ»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Վիրահատական դաշտի ախտահանման և մշակման հիգիենիկ միջոց: Օգտագործման համար պատրաստի հեղուկ, որը պարունակում է պրոպանոլ-1 և պրոպանոլ-2 տեսակների սպիրտ՝ 75%-ից ոչ պակաս, օկտենիդինի դիքլորիդ կամ համարժեք հակամիկրոբային ազդեցություն ունեցող այլ ПАВ նյութ 0.1%-ից ոչ պակաս, և մաշկի խնամքի համար փափկեցնող հավելումներ: Մինչև 1 լիտր պոլիէթիլենային տարայով, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%:»:*

Վերոնշյալ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին համապատասխանում են մի շարք ընկերությունների արտադրանքներ, դրանք են՝

1. “Наименование дезсредства: ОКТЕНИДЕРМ (кожный антисептик), Производитель: Фирма "Шюльке и Майр ГмбХ" (Германия). N-пропанол (пропанол-1) 30 %, Изопропиловый спирт (пропанол-2) 45 %, Октенидин дигидрохлорид 0.1 %, Вспомогательные компоненты.”,

2. “Наименование дезсредства: DERMAMBER, Производитель: ЗАО "Брынцалов-А", Россия. N-пропанол (пропанол-1) 30 %, Изопропиловый спирт (пропанол-2) 45 %, Октенидин дигидрохлорид 0.1 %.”,

3. “Наименование дезсредства: Стеримакс (кожный антисептик), Производитель: Фирма "БИОШИЛДС", Индия. N-пропанол (пропанол-1) 25 %, Изопропиловый спирт

(пропанол-2) 50 %, Триклозан (5- хлор-2-(2,4-дихлорфенокси)фенол) 0.5 %, Хлоргексидина биглюконат 0.53 %.” և այլ:

Ապրանքները պետք է ունենան.

1. Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP կամ այլ):

2. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:

3. ՀՀ ԱՆ կողմից հաստատված օգտագործման մեթոդական ուղեցույց՝ ՀՀ առողջապահության նախարարի 2015թ. սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի 20-րդ կետի համաձայն

4. Թիվ 11, 12 և 13 չափաբաժինների համար- Բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից՝ ախտահանիչ նյութերի երաշխավորման փաստը կարող է արձանագրված լինել այդ սարքավորումների մեթոդական ցուցումներում, կամ հաստատված լինել այդ սարքավորումները արտադրող ընկերությունների, կամ ախտահանիչ նյութը արտադրող ընկերության կամ նրանց պաշտոնական ներկայացուցիչների կողմից տրված երաշխիքային նամակով:

www.armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել 7 մասնակից՝

10-րդ և 15-րդ չափաբաժինների մասով հայտեր են ներկայացրել թվով 2 (երկու) մասնակից, իսկ 11-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով՝ հայտ է ներկայացրել միայն 1 (մեկ) մասնակից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 28.10.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար ախտահանիչ նյութերի ձեռքբերման նպատակով 24.10.2019թ. հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-

20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

10-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանիչ հաբեր»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Բուժ.գործիքների ախտահանման համար նախատեսված, ադիպինաթթու պարունակող հակամանրէային (ներառյալ տուբերկուլյոզ և հատուկ վտանգավոր վարակներ), հակավիրուսային, հակասնկային ակտիվությամբ օժտված դեզինֆեկցող ախտահանիչ միջոցներ հաբերի տեսքով, հաբի քաշը մինչև 6գ, որի ազդող նյութը դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղն է, յուրաքանչյուր հաբը լուծվելիս անջատվող ակտիվ քլորի քանակը ոչ պակաս 1,75 գրամ, փաթեթավորումը 100 հաբից ոչ պակաս տուփերով, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%:»:*

11-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Գլյուտարալդեհիդ պարունակող սառը մանրեզերծման նյութ բժշկական գործիքների համար»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Նախատեսված է բժշկական գործիքների ախտահանման և սառը մանրէազերծման համար: Երկկոմպոնենտ համակարգ բաղկացած հեղուկ և փոշի բաղադրիչներից, կամ պատրաստի լուծույթ: Ազդող նոյութը գլյուտար ալդեհիդ 2.2-2.7%, պարունակում է նաև կոռոզիայի ինհիբիտոր: Մինչև 5 լ տարաներով՝ 20%-ը 1 լիտրանոց: Պետք է երաշխավորված լինի Storz, Olympus, Fujinon, Pentax բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից ըստ դրանց մեթոդական ցուցումների՝ ախտահանիչ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 70%:»:*

12-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Օրթոֆտալատ ալդեհիդ պարունակող ախտահանիչ նյութ ENDOCLEANS սարքի համար»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Նախատեսված է բուժգործիքների ախտահանման և բարձր մակարդակի ախտահանման համար: Օժտված հակամանրէային ակտիվությամբ գրամ դրական և գրամ բացասական մանրէների՝ ներառյալ տուբերկուլյոզի միկոբակտերիաները, վիրուսների և սնկերի նկատմամբ, որի ազդող նյութը օրթոֆտալատ ալդեհիդն է, պատրաստի լուծույթը պետք է ունենա հակակոռոզիոն բաղադրամասեր: Մինչև 5 լ տարաներով: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%: Պետք է երաշխավորված լինի*

հոսպիտալում առկա Endocleans սարքավորման արտադրողի կողմից՝ ախտահանիչ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար:»:

13-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Ֆերմենտների կոմպլեքս պարունակող ախտահանիչ նյութ ENDOCLEANS սարքավորման համար»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Սպեցիֆիկ հոտով հեղուկ կոնցետրատ, ակտիվ ազդող նյութերն են ֆերմենտների կոմպլեքսը՝ սուբտիլիզին բակտերիալ կամ այլ պրոտեազա, ամիլազա, լիպազա, ցելյուլազա, ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ, PH-ը 7.8-8.8: Պետք է երաշխավորված լինի հոսպիտալում առկա Endocleans սարքավորման արտադրողի կողմից՝ ախտահանիչ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%:»:*

15-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Վիրահատական դաշտի (մաշկի) ախտահանման հեղուկ»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Վիրահատական դաշտի ախտահանման և մշակման հիգիենիկ միջոց: Օգտագործման համար պատրաստի հեղուկ, որը պարունակում է պրոպանոլ-1 և պրոպանոլ-2 տեսակների սպիրտ՝ 75%-ից ոչ պակաս, օկտենիդինի դիքլորիդ կամ համարժեք հակամիկրոբային ազդեցություն ունեցող այլ ՊԱԲ նյութ 0.1%-ից ոչ պակաս, և մաշկի խնամքի համար փափկեցնող հավելումներ: Մինչև 1 լիտր պոլիէթիլենային տարայով, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%:»:*

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների

ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված

էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի ապացույց առ այն, որ Պատվիրատուի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտած լինելու փաստը: Այն, որ սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները խոչընդոտում են հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Այսպես՝ Ընկերությունն իր բողոքում Հրավերի թիվ 10-րդ չափաբաժնի վերաբերյալ նշել է, որ Հրավերի 10-րդ չափաբաժնի մասերով «անվանումը» սյունակներում գրված են միևնույն անվանումները՝ «Դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ պարունակող հաբեր», սակայն «տեխնիկական բնութագիր» Հավելված թիվ 1-ի «տեխնիկական հատկանիշներ»-ը սյունակներում թիվ 10-րդ չափաբաժնի մասով առկա է «…անջատվող ակտիվ քլորի քանակը ոչ պակաս քան 1,75 գրամ….» պահանջը, որը՝

ա) խտրական է, համապատասխանում է «Ջոնսոն և Ջոնսոն» ֆիրմայի արտադրության «Պրեսեպտ» բրենդային անվանումով հաբերի վերին սահմանին, որով սահմանափակում է ՀՀ տարածքում գործող բոլոր բուժկանխարգելիչ հիմնարկներում (անկախ նրանց կազմակերպաիրավական ձևից և գերատեսչական պատկանելիությունից) կիրառման համար անհրաժեշտ՝ ՀՀ ԱՆ 10.09.2015թ. թիվ 48-Ն հրամանով նախատեսված հայերեն մեթոդական հրահանգներ ունեցող այլ արտադրողների արտադրանքներով հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի մասնակցությունը թիվ 10-րդ չափաբաժնի մրցույթին, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջները:

բ) ամբողջական չէ, չի ներառում «Ջոնսոն և Ջոնսոն» ֆիրմայի արտադրության «Պրեսեպտ» բրենդային անվանումով հաբերի ստորին սահմանի տվյալները, դրանով իսկ հանգեցնելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, ինչպես նաև հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ «նաև

Խաչպար» ՍՊԸ-ի, համար հավասար պայմաններ չի ապահովում, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջները:

Վերոնշյալների վերաբերյալ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուի կողմից Բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշմամբ նշվել էր, որ ախտահանիչ նյութը նկարագրելիս հիմք է ընդունել 2018թ.-ին ձեռքբերված և բանակում կիրառվող «Գեստ Մեդիքալ Լիմիթեդ Հինդ Ֆարմա» ֆիրմայի արտադրության «Հազ-Տաբ» ախտահանիչ նյութը, որի անջատվող ակտիվ քլորի պարունակությունը 1.75-ից պակաս չէ: Ակտիվ քլորի նույն քանակի պարունակություն ունի նաև «Ջոնսոն և Ջոնսոն» ֆիրմայի արտադրության «Պրեսեպտ» նյութը, ինչը հաստատվել է նաև «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից: Պատվիրատուի կողմից ներկայացվել է ՀՀ պաշտպանության նախարարության և «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի հետ 23.04.2018թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-9/11-1» ծածկագրով պայմանագիրը, որի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի համաձայն՝ պայմանագրի առարկան է հանդիսացել «Գեստ Մեդիքալ Լիմիթեդ Հինդ Ֆարմա» ֆիրմայի արտադրության «Հազ-Տաբ» ախտահանիչ նյութը, որի անջատվող ակտիվ քլորի պարունակությունը 1.75-ից պակաս չէ:

Հրավերի թիվ 11-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների վերաբերյալ Ընկերությունը նշել է, որ «տեխնիկական բնութագիր» Հավելված թիվ 1-ի «տեխնիկական հատկանիշներ»-ը սյունակի 3-րդ պարբերությունում առկա «... Պետք է երաշխավորված լինի հոսպիտալներում առկա Storz, Olympus, Fujinon, Pentax (թիվ 11-րդ չափաբաժին) և Endocleans (թիվ 12-րդ և 13-րդ չափաբաժիններ) բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից՝ ախտահանիչ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար: ....» պահանջը խտրական է, չի համապատասխանում ախտահանիչ միջոցների ՀՀ ԱՆ 10.09.2015թ. թիվ 48-Ն հրամանի սահմանումներին, սահմանափակում է հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի մասնակցությունը թիվ 11-րդ չափաբաժնի մրցույթին, հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, ինչպես նաև հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի, համար հավասար պայմաններ չի ապահովում, խախտելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջները:

Վերոնշյալների վերաբերյալ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուի կողմից Բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշմամբ նշվել էր երկու

ընկերությունների անվանումներ՝ Anios, Jhonson, որոնք համապատասխանում են Հրավերի թիվ 1-ին չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին, իսկ Բողոքաբերի կողմից գործի քննության ընթացքում չներկայացվեցին այդ փաստերը հերքող որևէ ապացույցներ: Հատկապես այն դեպքում, երբ տեխնիկական բնութագրում հստակ նշվել է, որ Ապրանքները պետք է ունենան.

1. Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP կամ այլ):

2. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:

3. ՀՀ ԱՆ կողմից հաստատված օգտագործման մեթոդական ուղեցույց՝ ՀՀ առողջապահության նախարարի 2015թ. սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի 20-րդ կետի համաձայն

4. Թիվ 11, 12 և 13 չափաբաժինների համար- Բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից՝ ախտահանիչ նյութերի երաշխավորման փաստը կարող է արձանագրված լինել այդ սարքավորումների մեթոդական ցուցումներում, կամ հաստատված լինել այդ սարքավորումները արտադրող ընկերությունների, կամ ախտահանիչ նյութը արտադրող ընկերության կամ նրանց պաշտոնական ներկայացուցիչների կողմից տրված երաշխիքային նամակով:

Հրավերի թիվ 15-րդ չափաբաժնի վերաբերյալ Ընկերությունն իր բողոքում նշել է, «տեխնիկական բնութագիր» Հավելված թիվ 1-ի «տեխնիկական հատկանիշներ»-ը սյունակի 2-րդ պարբերությունում առկա «… պարունակում է պրոպանոլ-1 և պրոպանոլ-2 տեսակների սպիրտ՝ ընդհանուր 75%-ից ոչ պակաս, ….» պահանջը խտրական է, համապատասխանում է «Ջոնսոն և Ջոնսոն» ֆիրմայի արտադրության նախկինում «Դոդեսեպտ 1000 մլ», իսկ այժմ «Օկտենիդերմ 1000 մլ» բրենդային անվանումով ախտահանիչ միջոցին, որոնց մշտապես առաջարկել և մշտապես հաղթող է ճանաչվել միևնույն՝ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն: Այդ պահանջը սահմանափակում է ՀՀ տարածքում գործող բոլոր բուժկանխարգելիչ հիմնարկներում (անկախ նրանց կազմակերպաիրավական ձևից և գերատեսչական պատկանելիությունից) կիրառման համար անհրաժեշտ՝ ՀՀ ԱՆ 10.09.2015թ. թիվ 48-Ն հրամանով նախատեսված հայերեն մեթոդական հրահանգներ ունեցող այլ արտադրողների արտադրանքներով հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի մասնակցությունը թիվ 15-րդ չափաբաժնի մրցույթին, խախտելով «Գնումների մասին» ՀՀ

օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջները:

Վերոնշյալների վերաբերյալ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուի կողմից գործի քննության ժամանակ ներկայացվեցին համապատասխան ապացույցներ, համաձայն որոնց «պրոպանոլ-1 և պրոպանոլ-2 տեսակների սպիրտ՝ ընդհանուր 75%-ից ոչ պակաս (պրոպանոլ-1-ի պարունակությունը առնվազն 20%)» բնութագրին առնվազն համապատասխանում են մի շարք ընկերությունների արտադրանքներ, դրանք են՝

4. “Наименование дезсредства: ОКТЕНИДЕРМ (кожный антисептик), Производитель: Фирма "Шюльке и Майр ГмбХ" (Германия). N-пропанол (пропанол-1) 30 %, Изопропиловый спирт (пропанол-2) 45 %, Октенидин дигидрохлорид 0.1 %, Вспомогательные компоненты.”

5. Наименование дезсредства: DERMAMBER, Производитель: ЗАО "Брынцалов-А", Россия. N-пропанол (пропанол-1) 30 %, Изопропиловый спирт (пропанол-2) 45 %, Октенидин дигидрохлорид 0.1 %.”

6. Наименование дезсредства: Стеримакс (кожный антисептик), Производитель: Фирма "БИОШИЛДС", Индия. N-пропанол (пропанол-1) 25 %, Изопропиловый спирт (пропанол-2) 50 %, Триклозан (5- хлор-2-(2,4-дихлорфенокси)фенол) 0.5 %, Хлоргексидина биглюконат 0.53 %.” և այլ:

Ինչ վերաբերում է Ընթացակարգին մասնակցելու նպատակով թիվ 11-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած միայն 1 (մեկ) մասնակից լինելու հանգամանքին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ միայն մեկ մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքը չի կարող գնահատվել, որպես այնպիսի էական նշանակություն ունեցող փաստ, ըստ որի կարելի կլիներ արձանագրել հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ չապահովելու հանգամանքը, ըստ այդմ էլ՝ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի դրույթների խախտումը: Օրենքի նշված դրույթի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ գնման առարկայի բնութագիրը պետք է ապահովի ոչ թե մեկից ավելի հայտի ներկայացման պարտադիր պայման, այլ պետք է ապահովի հնարավոր մասնակիցների հայտ ներկայացնելու հնարավորություն:

Սույն դեպքում Ընկերությունը, բողոքով նշելով միայն մեկ մասնակցի հայտ ներկայացնելու հանգամանքը, որպես գնման առարկայի բնութագրի խտրական լինելու փաստ, չի ապացուցել հնարավոր մասնակիցների մասնակցության անհնարինությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները անհիմն են, իսկ գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջները հիմնավոր են և չեն սահմանափակում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքները:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում առկա չէ, ինչը կարող էր հանգեցնել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 28.10.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/77 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**